

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առտօժան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարումին ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խորանայնս բառին 2 կոպէի:

ՄՇԱԿ

ԼՐԵՒԻՐ ՔՈՂԱՔՈՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. Ը. Ի. Ն.

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակի յոյն գիրքով և յոյն պրօզանմանյով ԱՄՆՆ ՕՐ (բացի տօն և տօնօրին հե-տեակ օրերից):
ՊՐՕԳՐԱՄԱՍ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներ-դիժ տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆեփիտօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ԳԻՆԵՐ, տարեկան 10 ռուբլ, կէս տարեկան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեակ հասցեով. Тифлисе, редакция «Мшакъ».
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: խղճի ազատութիւն: Նամակ երանից: Նամակ Ղալարից: Նամակ խմբագրի: Ներքին լուրեր: Արտաքին տես-տութիւն: Քաղաքական տեսութիւն: Նամակ Ֆրանսիայից: Արտաքին լուրեր: «Մշակ» հեռա-գիրներ: Յայտարարութիւններ: Բանասիրա-կան: Կաւիթ բեկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խղճի ԱՊՍՏՈՒԹԻՒՆ
«Голосъ» լրագիրը իր ներկայ տարվայ համարներից մէկի մէջ յիշեցնելով որ ե-

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ
(1722—1728)
Ս.Ա.

Մինչև այժմ երկու մէլիքների շահերը համա-ձայն և լծորդաբար էին ընթանում: Նրանց միա-բանութիւնը հայ գերեզմանի շրջապատում մնալու, պատանի Ստեփաննոսի սպանման և Գնուազի գաւառը իր միակ ժառանգից զրկելու վերաբե-րութեանը բողոքով անկեղծ էր: Բայց երբ այդ բողոք մեքենայութիւնները ոչնչացան, երբ գերե-նները ազատութիւն ստացան և Թորոս իշխանը յաղթող հանդիսացաւ, այնուհետ երկու մէլիք-ների միաբանութիւնը սկսեց փոքր առ փոքր խախտվել: Մինչև այժմ նրանք միաբան էին մէկ խորհրդի մէջ միայն, այն է՝ Գնուազի գաւառը զրկել իր միակ ժառանգից՝ Ստեփաննոսից, բայց թէ նրանց յետոյ ուժ կը մնար այդ գաւառը, վերջին հարցում երկուսի էլ շահերը տարբերվում էին: Մէլիք Ֆրանսիայից ցանկանում էր իր ձեռքը ձգել Գնուազը և ամբողջ Գափանի իշխանը դառնալ, իսկ մէլիք Կաւիթը նոյն իշխանութիւ-նը իրան էր վերապահում: Մէլիք Ֆրանսիայից աշխատում էր օգուտ քաղել մէլիք Կաւիթի և նրա ազնկայ աջակցութիւնից միայն սկզբնական գործողութիւնների համար, բայց երբ նա պար-նկատեց, որ ազնկայ բողոքովին հակառակ է իր հօրը, այնուհետ անկեղծ ցած ընկաւ այդ մարդու նշանակութիւնը իր աչքում և անկեղծ հաստատ կերպով համոզվեցաւ իր յոյսերի մէջ, թէ կա-րող է նրան ասպարէզից դուրս քշել:

Մէլիք Կաւիթը իր կողմից նկատում էր, որ իր վարկը, իր նշանակութիւնը հետզհետ ցած է ընկնում իր գործակցի աչքում, որ նա մինչև անգամ դադարել է իր հետ խորհրդակցելուց և ինչ որ գաղտնի ձեռնարկութեան պատրաստու-թիւններ է տեսնում: Մէլիք Ֆրանսիայից այդ ծած-

կող փետրվարի 3-ին գերմանական բազմա-թիւ քաղաքները կը տօնեն Ղեւոնդի մա-հուան հարիւրամեայ յօբելեանը, նկատում է, որ կատարվելու փառասուր և շքեղ հանդէսները և արտասանելի ճոխ ձառերը բողոքովին կեղծ կը լինեն, արդի հեռու հա-կահայեան շարժումը Գերմանիայի մէջ ապացուցեց, որ երևելի Ղեւոնդի գաղա-փառները զեռ ևս չեն տարածվիլ գերմա-նական ժողովուրդի մէջ: Գերմանացիներին շատերը ապացուցին, որ նրանք անկեղծ ըն-դունակ են քարոզել Շաէօկերի ճառերին

կատարվելու անկեղծ քաղաքները նրան, լես քո ձեռք կանխեմք... ասաց նա իր մտքում և դուրս եկաւ վրանից, անհամբերութեամբ սպասում էր իր ծանային, որին ուղարկել էր ներքինապետ Ահմէդի մօտ լուր բերելու: Արագուղը ներքինա-պետի միջնորդութեամբ կրկին փորձ փորձեց տեսնվելու իր ազնկայ հետ, յայտնելով, թէ ին-քը գնալու է Տաթև և ցանկանում է նրան մնաք բարով ասել: Նա ան մերադարձաւ, բերելով ուրախալի լուրը, թէ արկիւնը բարեհաճել է ըն-դունել նրան:

Գիշեր էր: Մէլիք Ֆրանսիայից այս գիշեր նոյն-պէս առանձին տնտեսութիւն էր խնդրել խանի հետ և գնացել էր նրա մօտ, առանց այդ մասին ի-մացում տալու մէլիք Կաւիթին: Ընկերույ այդ վարժուածը անկեղծ կատարածները մէջ էր գցում նրան: Այս պատճառով նա վարձել էր խանի մանկակները մէկին, որ լրատել մէլիքը խո-սակցութիւնը խանի հետ և իրան տեղեկութիւն տայ:

Միւրին ընդունեց հօրը մի առանձին վրանում, որ լուսավորված էր լուսաբերի լուսով և գտա-վում էր կանանցից դուրս: Այնտեղ կանգնած էր միայն ձեռքերը ներքինապետը, իսկ արկիւնը նստած էր գորգի վրա, և լուքս էլ չէր գրտել: Թէ ինչու նրան հետաքրքրում էր համարել գրգռի փոքրիկ քառակուսիները: Տեսնելով հօրը, նա դարձաւ դէպի ներքինապետը:

— Ահմէդ, դուք կարող էք վրանի դրսում ըս-պասել:
Ներքին հեռացաւ և նստեց վրանի կողքին, խոտերը վրա: Միւրին դու գլուխը խոտերից-բած, աչքերը չէր հեռացնում գորգից: հօր այ-ցելութիւնը խանաբեց նրան և մտապահ գորգի եզերքէ մի անգամ համարած քառակուսիների թիւը: Նա սկսեց կրկին համարել: Ազնկայ ստան ընդունելութիւնը սաստիկ վշտացրեց հօրը, բայց նա զսպելով իր վրդովմունքը, սկսեց հարական մեղմ և գթաւատ խօսքերով կշտամբել նրա ստա-նարտութիւնը:— սկսեց յիշեցնել նրան, թէ ին-չու հայր է, թէ հօր պատիւը, հօր յարգանքը ինչն Աստուած հրամայում է դաւակնելին, թէ

զրգովիլ, քան թէ ըմբռնել Ղեւոնդի պրա-դատու գաղափարները:

«Գերմանիայի մէջ սկսված հակահայեա-կան շարժումը, ասում է լրագիրը, Ռուսաս-տանի մէջ էլ արձագանք գտաւ: Մեր ան-կիրթները օգուտ քաղեցին այդ տխուր երեւոյթից և սկսեցին ծաղրել խղճի ազա-տութիւնը այն շարժաութիւններից զրգոված, որ խղճի ազատութեան գաղափարի ի-րագործելուց կարող են օգուտ քաղել նոյն-պէս և հրէաները: Փոխանակ հին վերքե-րը դարմանելու, նրանք նոր վերքեր են հասցնում: Գործանակ քրիստոնէական հը-րէաների հետ հաշտեցնելու, նրանք աշ-խատում են կրօնական թշնամութիւն ծա-ղեցնել, որի կորստաբեր հետեանքները մինչև անգամ որչէլ չէ կարելի:»

Չիմնվելով պատմական իրողութիւնների և օրինակների վրա, առաջ բերելով մի քանի նշանաւոր պատմական անձինքների վկայու-թիւնները խղճի ազատութեան բարերար հետեանքների մասին, լրագիրը այն կղա-կացութեան է հասնում, որ Ռուսաստանի համար անհրաժեշտ է խղճի ազատու-թիւնը և դաւանութիւնների կատարեալ հաւասարութիւնը: Այդ երկու օրէնքները, նկատում է վերջը լրագիրը, անհրաժեշտ են Ռուսաստանի պետական կեանքի զար-գացման համար:

դաւանները իրանց պարտաւորութիւնը այլ կերպ կատարած չեն կարող լինել, բայց միայն սիրե-լով և հնարանդովելով իրանց ծնողներին:

— Կու զիւնու, Միւրի, վերջացրեց նա իր քա-րոզը:— Ես ձերայնք եմ, այս աշխարհում իմ միակ յոյսը, իմ միակ մտխարութիւնը դու ես մնացել: Աստուած ինձ ուրիշ դաւաններ չը տուեց, եղածները բոլորը մտաւան: Եթէ դու ես չը մտխարեա թա հօր ձեռնութիւնը, ինչ կը լինի նրա վիճակը:

Միւրին դու նայում էր գորգի վրա. այժմ ըս-կուել էր համարել նրա միւս եզերքի քառա-կուսիները:

— Ես չըջայտալով եմ թշնամիներով, շարու-նակեց հայրը:— Իմ խորհրդակցիցները, իմ մտե-րիմներն անգամ փոս են փորում իմ առջև: Ա-մեն կողմից աշխատում են ինձ ցած գցել, ամեն կողմից պատրաստվում են խել իմ փառքը: Իմ ձեռնութիւնը խայտառակութիւնով կը վերջանայ, եթէ դու չօգնես ինձ: Կու այն դաւապանն ես, որ պետք է նեցուկ վրանուակէ իր ընթացքը: Ես նստեմ, նա պետք է լինի ինձ հետ: Բայց դու այն աստիճան անգուլթ ես, Միւրի, որ մինչև անգամ մտքում ես հօր այցելութիւնը: Միւրին լսեց վերջին խօսքերը միայն: Նա ան-գիտակցաբար համարում էր գորգի քառակու-սիները, բայց նրա միտքը թռել, պացել էր հեռու և հեռու, այն պատանու մօտ, որին Թո-րոս իշխանը այսօր իր հետ տարաւ:

— Այն, ես առաւօտեան մերժեցիլ քո այցելու-թիւնը, պատասխանեց նա, գլուխը վեր բարձրաց-նելով և այժմ միայն ուղիղ կերպով նայելով հօր երեսին:— Հիմա ընդունեցի: Ի՞նչ ասելք ունես: Այդ հարցը անկեղծ խոր խոցեց հօր սիրտը: Կը նշանակէ նա չէր լուսւ իր խօսքերը, կը նը-շանակէ ոչինչ ազնկայութիւն չունեցան իր քարոզները: Նրա յոյսերը բողոքովին շարգու-փշուր եղան, բայց դարձաւ չը կորցնելով իր վստահութիւնը, ասաց:

— Միւրի, դու պետք է միջնորդես խանի մօտ, որ Գնուազի և Բարդիւշատի մէլիքութիւնը ինձ յանձնէ: Կու կարող ես այդ անել:

ՏԱՍԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ
—
Յունվարի 14

Առողջապահական կամ քաղաքի մարքութեան համար կազմած յանձնաժողովը սկսեց իր գործը սոյն ամսի 12-ից. յուսով ենք, որ պ. բժ. Լ. Տիգրանեանցի նախագահութեան ներքոյ, ժողովը մեծ գործ կը կատարէ մարքութեան նկատմամբ, որին այդչափ կարօտ է մեր անմաքոր քա-ղաքը:—

Հայոց թեմ. դպրանոցի յարգելի հոգաբարձու-թիւնը սկսեց արդէն ուշադիր լինել դպրանոցի նրախան մասի աճեցնելուն, արդէն սկսել է դիմել 1872 թուի ստորագրվողներին, որ սի-րով են վճարում իրանց խոստացած նուէրը:— Լուսւ ենք, որ Ալեքանդրապոլի յայտը 5. Գ. Սուրէնեանը ցանկացել է գալ Երևան Գ. Եղիա-զար արքեպիսկոպոսի փոխարէն, ախոս միայն, որ ալեքանդրապոլցիք կը զրկվեն նորին գերա-պատուութիւնից:—

Մի գեղեցիկ օր պ. Պապադանեանը մի հեռա-գիր ձեռնին ցոյց էր տալիս սորան նորան, ի թիւս որոյ և Ս. Ղալաբանցի և Վարդ. Եղի-աղաբանցի և ասում. ահա Ս. Մանուկնին հրաւիրում է ինձ լինել ուսուցչապետ փխտփա-յութեանս դասերի ԼՂմիածնայ ձեռնարանում: Մենք այդ լուրը հրատարակեցինք. նա մեզ սը-տախօս անուանեց, մենք դարձանք: Հետա-քրքիր լինելով իմացանք, որ մենք ս ու ա ե ն ք ասել, որովհետեւ նորա պայմանը չէ հաստատ-վել, վասն զի աշակերտները յայտնել են թէ լաւելի լաւ են համարում ոչինչ չը սովորել, քան թէ պ. Պապադանեանցի փիլիսոփայութիւն սո-վորել:—

— Ես կարող եմ, բայց չեմ անի:
— Ի՞նչու:

— Ես չէի ցանկանայ, որ Գնուազի և Բար-դիւշատի հայ ընակիչները այնքան տանջվէին քո ձեռքում, որ գային խանի դրանը և իրանց կրակ տային, այրվէին, ինչպէս այրվեցին այսօր տաթևացիները:

— Միւրի, ընդունիր իմ խնդրքը, աղաչում եմ, առաջ տարաւ նա ողորմելի ձայնով:— Եթէ ձեռունի հայրը ոչինչ յարգանք չունի քեզ մօտ, դոնէ յիշիր մօրը, որ նրա կինն է եղել, որին սիրում էիր դու:

— Որին դու սպանեցիր... պատասխանեց Միւրին և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկու-թեամբ:

— Ե՛ս... բացականչեց հայրը սարսափելով:— Աստուած կը պատժէ քեզ, Միւրի, որ այսպէս չարաչար կերպով դրաբարում ես հօրը:

— Եթէ Աստուծոյ պատիժները չըտ վրա հասնէին, դու այժմ այս աշխարհում չը պիտի լինէիր... պատասխանեց նա դողողուն ձայնով:

— Երկնում եմ, դու սպանեցիր իմ մօրը: Կու ուրացար Լուսաւորչի սուրբ հաւատը Տաթևի մէլիքութիւնը ստանալու համար և այնուհետե քո տունը լցրիլ մահմտական կնիկներով: Խեղճ մայրս չը կամեցաւ այրել ուրացող ամուսնի հետ, թողեց քո տունը և գնաց իր հօր տունը: Գնա՛ի անգամ քարչ տուեցիր նրան և կամենում էիր ընտելեամբ քեզ մօտ պահել, բայց դարձաւ փախչում էր նա: Գնա՛ի անգամ դա-նակով քեզաւ նա քո անգուլթ ձեռքերից: Բայց այս բոլոր տանջանքներին կը համբերէր նա, եթէ դու չը խլէիր նրա միակ աղիւլիլ:— Ինձ, և չը գցէիր մահմտական հարեմի մէջ: Ես երբեք չեմ մոռանայ այն սգաւոր և ցաւալի օրը, երբ խեղճ մայրս, արտասուքը աչքերում, տարածվել էր գետնի վրա, գրկել էր քո ոտները: Միւս կողմում կանգնած էին խանի ներքինիները, իսկ մէջտեղում:— Ես: Մայրս աղաչում էր, պաղա-տում էր քեզ, որ ինձ խանի մարդկանց ձեռքը չը տաս: Ես լաց էի լինում: Կու, առ ոչինչ համարելով իմ և մօրս արտասուքը, ինձ յանձնե-

Այս տարի, բացի հացն ու գինուց, ամենայն կենսական պիտույքները համեմատաբար թանկ են, քան թէ անցեալ տարի. այսպէս մի ֆունտը 9 կ. է, Չանգվի ձկան ֆունտը 35—40 կ., իւրկնը՝ 50—60 կ., խաւարինը՝ 1 ր. 60 կ., մի հաւը 60—70 կ., 2 ձուս 5 կ.։—Եղանակները մինչև մօտ օրերս շատ տաք էին անցնում. այժմ ձիւն է զալիս և ցուրտը խիստ է. ձուները քիչ էր մնում, որ ծաղկէին, այժմ կարող են մնալ։—

«Մշակի» ընթերցողներից խնամաբար խընդրում եմ, որ սորա № 229-ի առաջին երեսի կրկրորդ սխեմակի մէջ տպուած հետեւալ տողերը կարգաւ այսպէս: «Ոչ ոք չէ մտածում որ իւրաքանչիւր տարի 500—700 հայ և թուրք ծնված երեխաներից՝ միայն 50 են ապրում հ ա Ր Ի Վ ր ի ց՝ թէ հայ և թէ թուրք միւսները մեռնում են ըստ մեծի մասին ջրի և օդի անմաքութեան պատճառով: Գիտե՞լո՞ւք եմ «ՆԱԵԿԱՅ» լրագրի յարգելի խմբագրութեանից եւ, որ վերոյիշեալի պէս ուղղէ իր № 350-ի մէջ հարցրած տեղեկութիւնը, որը քաղել է «Մշակի» վերոյիշեալ չիտ: Մի ուրիշ անգամ առիթ կուենանամ «Մշակի» ընթերցողներին ցոյց տալ ձիւղ թուրքի որ այդ տեղեկութիւնը չարագանցութեան չէ մեռնողների նկատմամբ, այլ մինչև անգամ փոքր ինչ պակաս եմ ցոյց տուել, ձեռքումս չունենալով թուրք երեխաների չարաբերականը առ այժմ:

Այս երեկոյ կըստում ե ու կ ա յ էր, այդ պատճառով այնքան մեծ էր բազմութիւնը, որ ասեղ ձգելու տեղ չը կար: Այդ միջոցին մի անսովոր թղթու զարդեց բազմութեանը. լացի և վայնասունի աղաղակը շփոթեց ամենքին. մինչև կոշտ էր լայրում է, միւս կողմ էր շաւր-վում է: Բանը նորոտումն էր, որ մի երիտասարդ բժիշկ իր դ ա մ Ի հետ մտնելով կըսէր. կողմակի սենեակներից մէկը, տեսնում է, որ բեռնակերան հրափամբուչներն են դիզված՝ տեղ-դելու ժամանակ մինք բռնկում է և վառում միւսներին, որից անպակն ճալթումն և բոց է վնասում և որը հաղի են հանգցնում: Սարսափած ժողովուրդը քիչ է մնում երեխաներին ոտքի տակ տարէ փակելու համար: Ինչ կը լինէր ժողովրդի դրութիւնը, եթէ շուտ չը կարողանային հանգցնել ժամանակ չէ արդեօք, որ մեր քաղաքն էլ ունենայ ՚հրաշք միւսերաներ:

Ն ո Ր ա յ ր

ցիւր նրանց ձեռքը: Մայր կատաղութեամբ վրա վազեց, ինձ բռնեց, և երկար կռիւցով նրանց հետ, չէր թողնում, որ ինձ ամենն. Գուբունցբով զարկեցի մօրս գլխին, նա ուշաթափ ընկաւ գետնի վրա և այնուհետև չը վեր կացաւ նա...
 Մի ուրիշ մարդ մէլքը Գաւթի փողարէն, հարազատ դասեր բերանից լսելով այդ անէծքը, լսելով այդ բոլոր դատապարտական խօսքերը, կը զղջար, կը փռանայ իր եղևնագործութեան համար, բայց նա, տեսնելով, որ իր մեղմ, գրաւիչ խրատներով չը կարողացաւ համոզել նրան, մտածեց վախեցնել աղջկան:
 — Բայց ես չեմ կարծում, որ քո մօր յիշատակը այնքան վրդովեցնէր քեզ իմ զէմ, որքան մի ուրիշ բան...
 — Ինչ բան, հարցրեց Միւրին, սրբելով աչքերից արտասուքը, որ հեղեղի նման թափվում էր մօր պատմութիւնը անկու ժամանակ:
 — Այն բանը, որ ես քեզ խնայեի քո սիրականի գրկից... որը այսօր քո չնորհու ազատութիւն գտաւ... որի վերջերը դու դարձանում էիր բանասիր մէջ... և որի հետ դու մտածում ես շարունակել քո հին յիշարութիւնները...
 — Այդ բոլորը ճիշտ է, պատասխանեց Միւրին սառնութեամբ.— Ես Ստեփանին սիրում էի նա-ուսչ, սիրում եմ և այս րոպէիս: Այ՛ս, դու ինձ խնայիր նրա գրկից և ես այդ չեմ ների քեզ:
 — Եւ կաշխատես կրկին նրա գրկին ընկել...
 — Կաշխատես...
 — Եւ կաշխատես Գեներալի իշխանութիւնը նրան վերադարձնել...
 — Կաշխատես...
 — Եւ կաշխատես յետոյ փախչել զնալ նրա մօտ...
 — Կաշխատես...
 — Բայց գիտես ես ինչ կանեմ...
 — Գու ինձ կը մասնես... դու այդ բոլորը կը յայտնես նային...
 — Եւ հասկացա՞ր պատասխանեց հայրը կատարի բարկութեամբ.— Բայց գիտես խամր քեզ ինչ կանեմ:

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ
 Գեկտեմբերի 28-ին 80

Ուղարկում եմ 43 բուրլի Հայաստանի սովատանջներին հասցնելու համար, որը նուրիւ են մի քանի անձինք. ուղարկում եմ և ցուցակը, որը խնդրեմ տպէք ձեր լրագրում:
 Ս. Ղօրգանեանց 10 ր., Ե. Թավարեանց 10 ր., Գ. Արքախանց 5 ր., Յ. Աստուածատրեանց 5 ր., Գ. Բօթանեանց 5 ր., Մ. Սիւնիկեանց 5 ր., Ս. Թումանեանց 3 ր:

Մ Կ ր Կ Ն անանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ
 Թիֆլիս, 15 յունվարի

Մեր քահանայները կարող են շատ բան ա-նել, եթէ ուզենան: Ահա բերում եմ օրինակը:
 Ամսիս 11-ին, կիրակի օրը, Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական պ. Գալուստ Գարիբանը մի ուրախ հացկերթ էր պատրաստած Մողու միսբաններին պատուելու համար:

Առաջարկում էին տեղական սովորութեան համաձայն զինով լքը բաժանիչը զանազան ան-ձանց բարեօգտութիւններով: Պարոն Յովհան-նէս Տէր-Նիկողոսեանը, որ սեղանի կատավարէ էր (թամաղա), ժամաւորից անցնելով դէպի ընդ-հանուրը՝ առաջարկեց աղային ամեն քարե-րարաց յիշատակի համար բարեօգտութիւններ, ի միջի որոց և այն անձանց կենացը, որոնք ի-րանց ունեցած կօպէկը չեն ինայել կրիւր խեղ-ձերի հետ:

Բարեպատն միջոց համարելով այդ ժամանակ ներկայ եղող քահանայներից մինք բազմաթիւ ընդարձակ բարեօգտութիւններ նշանակութիւնը նկատեց, որ մենք պարտական ենք, նաև խրա-խուսելով, գո՛հ լինել այն անձինքներից, որոնք իրանց ունեցածի մի տասներորդ, մի հարիւրորդը չեն ինայում իրանց կարօտեալ եղբայրների հա-մար: Բաւական չէ միայն ցանկալ, բաւական չէ այդ առիթով միայն բաժանիչը դատարկել, ա-ւելացրեց նա, այդ չէ նշանակում թէ մենք նո-րանց սիրեցինք, այլ և պարտական ենք գ ո Ր ձ ո վ ապացուցանել, որ, այ՛ս, մենք սիրում և օգնում ենք մեր կարօտեալ եղբայրներին, տաճ-կահպատակ մեր սովատանջ եղբայրներին:

— Ես չեմ խեղդել կը տայ:
 — Հիմա լաւ մտածիր, ի դուք տեղը մի բար-կացրու հօրդ:
 — Ես բոլորը մտածել եմ, ինձ մնում է երկու բան.— կամ մեռնել, կամ ընրա՝ հետ ապրել:
 Մէլքը Գաւթի չէր կարծում, թէ կը հանդիպի այս աստիճան հաստատմութեան իր աղջկայ կողմից: Նա դրաց իր սխալը, որ խօսակցութիւնը ծայրայեղութեան հասցրեց, այս պատճառով փորձ փորձեց շարժել Միւրիի գիթ-սրտովիւնը:
 — Երեւոնի հայրը ներողութիւն է խնդրում քեզանից, Միւրի, սոսց նա, բռնելով նրա ձեռ-քը.— Մոռացիր բոլորը, ես մեղաւոր եմ քո առջև, մեղաւոր եմ և քո հանգուցեալ մօր առջև...
 Այդ միջոցին նրա աչքերում երևացին մինչև անգամ արտասուքի կաթիլներ: Բայց Միւրին թափ տուեց նրա ձեռքը և վեր կացաւ, ա-սելով:
 — Ես կը մոռանայի բոլորը, եթէ հաւատայի, որ քո խտտովանութիւնը անկեղծ է: Բայց դու խարում ես ինձ:
 — Աստուած, երկինք, դեպիք վկայ, որ չեմ խարում: Գու դաբժեցրի իմ մէջ մեռած խիղձս, Միւրի, դու կրկին վառեցիր ճնոթակա զուժը, որ հանգած էր իմ սրտում: Մորդ ուրուականը գիշեր և ցերեկ հալածում է ինձ, հանգստութիւն չէ տալիս: Նա կը ներէ ինձ, եթէ դու ներես:
 Վերջին խօսքերը աղջկան Միւրիի սրտին Նա պատրաստ էր գրկել իր հօրը, համբուրել նրա չրթուքը, որ արտասանեցին այդ ակտը, սպաշխարութեան խօսքերը, որ առաջին ան-գամն էր լսում նրա բերանից: Բայց այդ միջո-ցին վրանի մտաքի առջև արձանացաւ ծերունի ներքինապետի զայրացած պատկերը և լսելի եղաւ նրա տպաւնական ձայնը:
 — Գու, սոսց նա մէլքին, — նախ քան մե-ղանկը քո ընտանիքի, քո զաւակի և քո ան-բախտ կնոջ առջև, մեղանկ ես քո աղքի առջև, որի որդիք քո հարստահարութիւններից աղաա-վելու համար, այսօր իրանց այրեցին: Գու մե-

Չը գիտեմ արժ. հօր խօսքերն էին պատճառը, թէ սիրտ չարժող երգասացութիւնները, որոնք կատարում էին իւրաքանչիւր մի անմահ բարե-րարի անուան յիշատակութեան ժամանակ, թէ ինչպիսի նուիրականութիւնը, ինչ և իցէ մի վար-կենի մէջ բոլոր ներկայ եղողների նուէրները արդէն պատրաստ էին, որի զուտարը այս սողե-րի հետ ուղարկվում է խմբագրութեանը, խըն-դրվելով հասցնել ուր հարկն է:

Ահաւասիկ նուիրատուների անունները: Բար. Մուշեղ քահանայ Տէր-Ղևորդեան 1 ր., Յովհան-նէս քահանայ Տէր-Գրիգորեանց 1 ր., Պ. պ. Յովհաննէս Տէր-Նիկողոսեանց 3 ր., Յովնէֆ Տէր-Արքահամեան 3 ր., Արքիս Վարդանեան 3 ր., Յովնէֆ Պապոյեան 3 ր., Գալուստ Գարի-բան 3 ր., Գրիգոր Լաղրեան 3 ր., Գրիգոր Գանդուգրեան 1 ր., Ղազար Տէր-Ղազարեան 1 ր., Սամսոն Բարսեղով 3 ր., կարապետ Գա-րիբան 5 ր., և Երգար Գրիգորեան Յարութիւ-նեանց 15 ր.: Ընդամենը ք ա ո ա ս ու ն ն է ի ն զ (45) բուրլ:

Մ ի հ ի շ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր խնդրում են տպել հետեւալը. Ծանկա-ցողները մասնակցելու Հ ա յ կ ա կ ա ն ր ա ը Կ ո Ր Ձ ա կ ա ն ը ն կ եր ու թ ե ա ն կանոնա-դրութեան նախագծի քննութեանը, հրաւիրվում են յունվարի 25-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին հնոր՝ բերել Արծրուհու թատրոնը: Ա-ռաջին ժողովը եղաւ յունվարի 4-ին, իսկ կիրա-կի օր կը լինի երկրորդ ժողովը, նախագծի քնն-նութիւնը շարունակելու նպատակով:

ԲԱՆՈՒԻՑ հեռագրով խնդրում են մեզ յայտ-նել մեր լրագրի մէջ, որ «Մարդասիրական» ըն-կերութեան ընդհանուր ժողովը լինելու է յուն-վարի 25-ին:

Կովկասեան Բժշկական Ընկերութիւնը խնդ-րում է մեզ յայտնել, որ կիրակի, յունվարի 25-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում լինե-լու է պ ա Ր ա հ ա ն զ է ս յօդուա զանձարանի, որ հիմնված է Կովկասեան բժշկների չքաւոր բերքին և այրիներին նպաստ հասցնելու նպա-

ղանկն ևս Յիսուս Բրիտանի առջև, որովհետև ուրացար մեր սուրբ Գրիգոր Լուսաւորի կրօնը: Ոչ ոք չի կարող ներել քեզ, մինչև աղղը և եկեղ-ղեցին չը ներեն քեզ: Եթէ քո խօսքերը ճշմա-րիտ են, եթէ զարթնել է քո մէջ խիղճը, գնա, մտիք Տաթևի վանքի մէջ, որ բա ձեռքով քան-դեցիք. սրի սրբութիւնները կողոպտեցիք. — գնա մտիք նրա տաճարի մէջ և այնտեղ ներողութիւն խնդրի: Այն ժամանակ բոլորը կը հայտնեն քեզ հետ, թէ աղղը, թէ եկեղեցին և թէ քո զաւակը: Բայց քանի որ դու քո փառասիրու-թեան համար անապիտ կանես ամեն սրբութիւն, ամեն մարդ անէծք կը թափէ քո գլխին: Ինչու ես մոլորեցնում այդ անբախտ աղջկան. ինչու ես աշխատում նրան դարձիւր շինել քո չար դի-պտաութիւնների: Բաւական չէ, որ Տաթևի ամբողջ զաւաւը տանջվում է քո ձեռքով, հի-մայ կամենում ես փնտաղը ու Բարդուղիմէս էլ ձեռք գցել: Այդ չես կարող յաջողեցնել: Այդ երկու զաւակները պատկանում են այն պատա-նուն, որի հօր իշխանութիւնը ոչնչացաւ քո սա-տանայական դաւաճանութեամբ, որը այդ կնոջ օրինաւոր նշանածն էր: Բայց դու սոսնակիս ա-րեցիր, թէ քահանայի օրհնութիւնը, թէ աղջկայ սէրը...
 Վերջին խօսքերը կրկին բաց արեցին Միւրիի վերջերը, կրկին զարթեցրին նրա մէջ վաղմիկ դաւան առեւթիւնը դէպի իր հայրը: Մէլքը Գաւթի մի քանի րոպէ մնաց շանթաւորի նման պապանձված, և ոչ մի խօսք չը գտաւ պատա-խանակաւ: Որտեղից յայտնվեցաւ այդ սատանան. միթէ նա լսում էր դրսից կը բոլոր խօսակցու-թիւնները: Մէլքը Գաւթի պատրաստ էր իր սուրը նրա կողքը խրել այդ կը լինէր ամենազ-գու պատասխանը նրա կարծիքով, բայց իսնկի ներքինապետի վրա ձեռք բարձրացնելու չափ նա քանցելիւն չուներ: Այս պատճառով սոսց նա չար ծաղրածութեամբ:

— Մի հայ, որին կուտում են Ահմէդ, փորձանակ ուրիշներին խրատներ տալու, աւելի լաւ կանէ, եթէ նախ ինքը գնայ, մտնէ Տաթևի վանքը և կրկին ընդունէ քրիստոնէութիւնը...
 Մի օր, որին կուտում են Ահմէդ, փորձանակ ուրիշներին խրատներ տալու, աւելի լաւ կանէ, եթէ նախ ինքը գնայ, մտնէ Տաթևի վանքը և կրկին ընդունէ քրիստոնէութիւնը...
 (կը շարունակուի)

տակով: Տոմարներ կարելի է ստանալ Շահվեր-գովի պատվիրոտում և Թիֆլիսի կուրի (ժողո-վարանի) շէյքաբի մօտ: Տօմարների գներ տը-ղամարդկանց համար 2 բուրլ է, կանանց համար 1 բուրլ: Պարահանդէսը սկսվելու է երեկոյեան 9 ժամին:

Այս օրերս Թիֆլիսի ճանապարհի վրա աւա-զակները յարձակվելով հաւաքաբեկ յայտնի գրեաց Մայիլի վրա, սպանել են նրան և խլել են նրանից իր հետ տարած մատաղացու ոչնչացր: Այս գրեաց կինը սովորութիւն ունէր ամեն շա-բաթի օր բորիկ ոտով Թէլէթ ուխտ գնալու: Չարմանալի չէ, արդեօք, որ նա, որ ուրիշների ապագան դուշակու էր, չը կարողացաւ իմանալ իր սեփական գլխի գալթը: Արեւոյ չաւարաբը մեծ սերտութեան մէջ է գրեաց կնոջ կորուստի պատճառով և ստոււ են, որ Թէլէթը խուով է այդ ստուուածապաշտ կնոջից, որովհետև նա նո-րերուսն մի ուրբաթի օր խողի միս էր կերել:

ԲԱՆՈՒԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքում շարունակվում է ստորագրութիւնը յօդուա Կ. Պօլսի «Մեացեալ Ընկերութեան» այդ ընկերու-թեանց ստացված ստորագրութեան թիւերի օգ-նութեամբ: Նոյն քաղաքից մեզ գրում են, որ յունվարի 13-ին այդտեղ սաստիկ ցրտեր են սկսվել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիւրքաց կառավարութեան վերջին շըր-ջաբերականը միատեսակ տպաւորութիւն չը գործեց այն պետութիւնների վրա, որոնց ներկայացուցիչներին նա յանձնվեցաւ: Ինչ-պէս երևում է գերմանական և աւստրո-ունգարական պաշտօնական լրագրիներից, Վիեննայի և Քերլինի կառավարութիւն-ներին շըջաբերականը ուրախութիւն պատ-ձառեց: Փարիզի մէջ նա վատ տպաւորու-թիւն գործեց, որովհետև նա մի հարուած համարվեցաւ. Բարոնելի մէնտ-լլերի ա-

Մէլքի անարկութիւնը չարագանց վիրաւո-րական էր: Ներքինապետը կծու կեղծով պա-տասխանեց նրան.

— Ես այդ վաղուց կանէի, եթէ հարկադրված չը լինէի, Ահմէդ անուան սակ ծածկվելով, պաշտ-պանել իմ աղայիններին ձեռպնեցիք շարա-գործութիւններից: Ես յոյս ունեմ, որ մեր Լու-սաւորիչ պապը կը ներէ ինձ, որովհետև երբէք դաւաճանած չեմ նրա եկեղեցուն, այլ որքան կարողացել եմ, պահպանել եմ նրա դունդը ձեզ նման գաղտնից...
 — Եւ դու կը վարձատրուես այդ ծառայու-թիւններից համար...
 — Չը լինի թէ դիտաւորութիւն ունես ինձ ևս մասնելու, խօսեց ներքինապետը զայրացած կերպով.— հրամայեցէք, ճանապարհոր ձեզ ցոյց կը տամ...
 Մէլքը վեր կացաւ և միթմրթալով հեռացաւ: Միւրի և ներքինապետը մնացին միայնակ:

— Գու ի դուր բարկացրի նրան, Ահմէդ, ա-սաց տիկինը.— նա ամեն բան պատրաստ է անել:
 — Ահնոզ կացէք, տիկին, ոչինչ չի կարող անել, պատասխանեց ներքինապետը հանդար-տութեամբ.— Նա ունի ինձ մօտ մի այնպիսի գաղտնիք, եթէ խանին յայտնելու լինեմ, իսկոյն նրան զգալ կը տամ, որ նրա կեանքը իմ ձեռ-քումն է, և նա լեղզուն կը քաշէ...
 Գորին տիրութեան մէջ սկսեց տիկինը դիմել դէպի իր վրանը: Նա իրան այնքան անբախտ էր դուրս, որ լսում էր իր հօր մասին հարկաւ-ստութեամբ: Ինչ կարող էր ասել դառն ճշմարտութիւնների դէմ: Նա ունէր մի հայր, որը ոչ երկնքում և ոչ այս աշխարհում մի հա-տիկ բարկեղծ չուներ, որին դաւաճանած չը լի-նէր: Նա մինչև անգամ յանցաւոր էր խանի մօտ, որի բարեբարութիւնները վայելում էր:

(կը շարունակուի)

